



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին
ատյանի դատարանի (վարչական դատարանի)
որոշում թիվ 0003/05/10թ.

Վարչական գործ թիվ 0003/05/10թ.

Նախագահությամբ դատավոր՝ Ա.Թադևոսյան
Դատավորներ՝ Մ.Ստեփանյան
Մ.Ավանեսյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

«27» մայիսի 2010թ.

ք.Ստեփանակերտ

ԼՂՀ Գերագույն դատարանը վճռաբեկության կարգով՝ կազմով.

նախագահությամբ դատավոր՝ Գ.Հարությունյանի
դատավորներ՝ Ի. Կարապետյանի
Զ. Օհանյանի

քննելով Ս.Ալեքսանյանի հայցադիմումը՝ բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ իրավունքների պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասով՝ վերադարձնելու, իսկ ինքնակամ կառույցված ավտոտնակը և քարե աստիճանները քանդելու պահանջի մասով՝ ընդունումը մերժելու մասին ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին
ատյանի դատարանի 2010թ. ապրիլի 2-ի որոշման վերանայման արդյունքում կայացրած ԼՂՀ
ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2010թ. ապրիլի 16-ի որոշման դեմ
բերված հայցվոր Սիրան Ալեքսանյանի ներկայացուցիչ Արմեն Թարխանյանի վճռաբեկ
բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1.Գործի դատավարական նախապատմությունը.

Հայցվոր Սիրան Տիգրանի Ալեքսանյանը՝ հայց ներկայացնելով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան ընդդեմ Մարտիկ Նոռենի Իսրայելյանի և ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանման՝ խնդրել է պատասխանողի բնակելի տան և տնամերձ հողամասի

նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը մասնակի անվավեր ճանաչել և պարտավորեցնել պատասխանողին քանդել ինքնակամ կառուցված ավտոտնակն ու քարե աստիճանները:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի (այսուհետ՝ Վարչական դատարան) 2010թ. ապրիլի 2-ի որոշմամբ Սիրան Ալեքսանյանի հայցադիմումը՝ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մատյանում գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու պահանջի մասով՝ վերադարձվել է, իսկ ինքնակամ կառուցված ավտոտնակն ու քարե աստիճանները քանդելուն պարտավորեցնելու պահանջի մասով՝ հայցադիմումի ընդունումը մերժվել:

Նշված որոշման դեմ Ս.Ալեքսանյանը 2010թ. ապրիլի 12-ին բողոք է բերել Վարչական դատարան:

Վարչական դատարանի 2010թ. ապրիլի 16-ի որոշմամբ Ս.Ալեքսանյանի բողոքը մերժվել է:

Սույն գործով վճռաբեկ բողոք է ներկայացրել հայցվոր Սիրան Ալեքսանյանի ներկայացուցիչ Արմեն Թարխանյանը:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

1. Դատարանը չի կիրառել ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 4-րդ մասը, որը պետք է կիրառեր:

Բողոք բերած անձը նշված պնդումը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Համաձայն ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 4-րդ մասի՝ հայցադիմումում թույլ տրված խախտումները վերացնելու և որոշումը ստանալու օրվանից հետո՝ 15-օրյա ժամկետում, դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը դատարանում ընդունված է համարվում սկզբնական ներկայացնելու օրը:

Վարչական դատարանի դատավոր Կ.Մարդանյանը 2010թ. մարտի 22-ին որոշում է ընդունել ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ, 9-րդ և 10-րդ կետերի պահանջները չպահպանելու և պետական տուրքը պակաս վճարելու հիմքերով հայցադիմումը վերադարձնելու մասին: Վերացնելով դատարանի կողմից նշված թերությունները, 2010թ. մարտի 31-ին հայցվորը կրկին դիմել է Վարչական դատարան, հետևաբար հայցադիմումը դատարանում ընդունված է համարվում 17.03.2010թ.:

2. Դատարանը սխալ է կիրառել ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասը:

Նշված պնդումը բողոք բերած անձը պատճառաբանում է հետևյալ փաստարկներով.

Դատարանը նշում է, որ հայցվորն իր իրավունքների խախտման մասին իմացել է 2009թ. հունիս ամսում և չի ներկայացրել միջնորդություն՝ դատավարական ժամկետները վերականգնելու մասին, մինչդեռ համաձայն «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ իրավական ակտերը ուժի մեջ են մտնում քաղաքացիներին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրը: Իսկ մինչև ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանման 30.03.2010թ. N 359-ել գրությանը, հայցվորը չի տեղեկացվել պետական գրանցման մասին, հետևաբար բաց չի թողել բողոքարկման ժամկետները:

3. Դատարանը սխալ է կիրառել ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, քանի որ դատարանի օրինական ուժի մեջ մտած 21.12.2009թ. վճռի հիմքում դրված է այն, որ վիճելի կառույցները կառուցված են սպասարկման գոտում և քաղաքաշինական նորմերի խախտումներով, իսկ տվյալ գործի հիմքն այն է, որ կառույցները կառուցված են հայցվորի սեփական հողամասում և խախտվել է նրա սեփականության իրավունքը:

Բողոք բերած անձը խնդրել է բավարարել վճռաբեկ բողոքը և վերացնել Վարչական դատարանի 2010թ ապրիլի 2-ի և 2010թ. ապրիլի 16-ի որոշումները:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի օրինական ուժի մեջ մտած 21.12.2009թ. վճռով Սիրան Ալեքսանյանի հայցն ընդդեմ Մարտիկ Իսրայելյանի և ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանման՝ սեփականության իրավունքի պետական գրանցումը անվավեր ճանաչելու և ինքնակամ կառուցված ավտոտնակն ու սանդուղքները քանդելուն պարտավորեցնելու պահանջի մասին՝ մերժվել է:

2. Հայցվոր Ս.Ալեքսանյանը 17.03.2010թ. հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանման, Մ.Իսրայելյանի՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը մասնակի անվավեր ճանաչելու և ինքնակամ կառուցված ավտոտնակը ու քարե աստիճանները քանդելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

3. ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 22.03.2010թ. որոշմամբ վերադարձվել է Ս.Ալեքսանյանի կողմից ներկայացրած հայցադիմումը՝ թերությունները վերացնելու և այն կրկին ներկայացնելու համար:

4. Վերացնելով դատարանի կողմից նշված թերությունները, հայցվորը 2010թ. մարտի 31-ին կրկին դիմել է դատարան:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում՝ Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը ենթակա է մերժման, իսկ դատարանի որոշումը՝ թողնելու անփոփոխ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի համաձայն, հայցադիմումին ներկայացվող պահանջների շարքին է դասվում նաև դատավարական ժամկետների լրանալուց հետո հայցադիմում ներկայացնելու դեպքում ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն ներկայացնելը: Այն չներկայացնելը, ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, հայցադիմումը վերադարձնելու հիմք է հանդիսանում: Ինչը բխում է նաև ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներից, համաձայն որոնց՝ դատավարական ժամկետների ավարտից հետո ներկայացված հայցադիմումները... դատարանը չի քննարկում և վերադարձնում է դրանք ներկայացրած անձանց, եթե բացակայում է բաց թողնված դատավարական ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքը վերականգնելու մասին միջնորդությունը:

Ինչ վերաբերում է վճռաբեկ բողոք բերած անձի կողմից «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի վկայակոչմանը, ապա Գերագույն դատարանն արձանագրում է, որ նշված նորմը տվյալ դեպքում կիրառելի չէ, քանի որ անշարժ

գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցումը ուժի մեջ է մտնում դրա հասցեատիրոջը՝ կոնկրետ դեպքում պատասխանող Մ.Իսրայելյանին պաշտոնապես իրազեկելուն հաջորդող օրվանից:

Գործի նյութերով հաստատված է, որ Ստեփանակերտ քաղաքի Արզանյան փողոցի թիվ 23 հասցեում գտնվող բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ Մարտիկ Իսրայելյանի սեփականության իրավունքը գրանցվել է 2009թ. հունիսի 19-ին:

Հայցվորը հայց է ներկայացրել դատարան 17.03.2010թ., այսինքն՝ ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված երկամսյա ժամկետի (հայց ներկայացնելու ժամկետը) խախտումով, հետևաբար հիմնավոր է Վարչական դատարանի հետևությունը՝ բաց թողնված ժամկետի վերականգման մասին միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտության մասին:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածով նախատեսված հայցադիմումի ընդունումը մերժելու հիմք է նաև նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և նույն հիմքերով օրինական ուժի մեջ մտած վճռի առկայությունը:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ հայցերի նույնության հարցը պարզելու համար անհրաժեշտ է ճշտել հայցի տարրերը, այսինքն նրա բաղկացուցիչ մասերը, որոնք որոշում են նրա բովանդակությունը, նրա իրավական բնույթը և հնարավորություն են տալիս անհատականացնել հայցը, որպեսզի բացառվի նույն կողմերի միջև նույն տարրերով հարուցվող հայցադիմումների կրկին անգամ վարույթ ընդունելը:

Գործի նյութերից երևում է, որ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2009թ. դեկտեմբերի 21-ի օրինական ուժի մեջ մտած վճռով մերժվել է Միրան Ալեքսանյանի հայցն ընդդեմ Մարտիկ Իսրայելյանի և ԼՂՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Ստեփանակերտի տարածքային ստորաբաժանման՝ սեփականության իրավունքի պետական գրանցումը անվավեր ճանաչելու և ինքնակամ կառուցված ավտոտնակն ու սանդուղքները քանդելուն պարտավորեցնելու պահանջների մասին (գ.թ. 38-39):

Սույն գործով հայցապահանջը նույնպես վերաբերվում է ինքնակամ կառուցված ավտոտնակին ու սանդուղքներին:

Բողոք բերած անձը վիճարկում է նախկինում և ներկայումս ներկայացրած հայցերի հիմքերի նույնությունը:

ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 72-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի համաձայն, հայցադիմումը պետք է բովանդակի այն փաստերը, որոնց վրա հիմնվում է հայցվորի պահանջը: Դա հայցի հիմքն է:

Համեմատելով 21.12.2009թ. վճիռը և ներկայացված հայցադիմումը, Գերագույն դատարանն արձանագրում է, որ նշված վճռով ինքնակամ կառույցները քանդելուն պարտավորեցնելու հայցվորի պահանջը և հայցադիմումի՝ քարե աստիճանները և ավտոտնակը քանդելուն պարտավորեցնելու պահանջը հիմնված են այդ կառույցների ինքնակամ լինելու միևնույն փաստի վրա: Այսինքն, նշված հայցերի հիմքի ոչ նույնական լինելու մասին բողոք բերած անձի փաստարկները հիմնավորված չեն:

Հետևաբար, Վարչական դատարանը ճիշտ է կիրառել ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և կառույցները քանդելուն պարտավորեցնելու պահանջի մասով հայցադիմումի ընդունումը մերժել:

Ինչ վերաբերում է հայցադիմումը վերադարձնելու մասին Վարչական դատարանի 2010թ. մարտի 22-ի որոշման մեջ՝ որպես թերություն ժամկետի խախտմամբ հայցադիմում ներկայացնելու մասին չնշելու վերաբերյալ բողոքի փաստարկներին, ապա դրանք ևս անհիմն են, քանի որ օրենսդիրը որևէ ձևով չի սահմանափակում նախկին հայցադիմումի

Թերությունները վերացնելուց հետո կրկին թերություններով ներկայացված հայցադիմումը վերադարձնելու դատարանի իրավասությունը:

Վերոգրյալի հիման վրա Գերագույն դատարանը գտնում է, որ Վարչական դատարանը ճիշտ մեկնաբանելով և կիրառելով սույն բողոքի հիմքում նշված նորմերը, կայացրել է ըստ էության հիմնավոր և պատճառաբանված որոշում, ուստի ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 239-րդ հոդվածով նախատեսված որևէ հիմք չկա ստորադաս դատարանի դատական ակտը բեկանելու կամ փոփոխելու համար:

Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով ԼՂՀ վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ, ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց`

1. Սիրան Ալեքսանյանի ներկայացուցիչ Արմեն Թարխանյանի վճռաբեկ բողոքը մերժել: ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի (վարչական) դատարանի 2010թ. ապրիլի 16-ի որոշումը թողնել անփոփոխ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ`

Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ`

**Ի. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Զ. ՕՉԱՆՅԱՆ**